ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 37-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ 20 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՒ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N 867 որոշման կարգի 5,6 կետերով, «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի, համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարին հասցեագրված համասեփականատերերի՝ Գարուշ Մխեյանի ընտանիքի անդամների դիմումը՝

Որոշում եմ.

1. Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի կողմից Գարուշ Երեմի Մխեյանի (ծնված՝04.01.1949թ., անձնագիր՝ 3210966728,

տրված 04.02.2011թ., ԴՄԾ 420-004-ի կողմից), Սոնիկ Կարապետի Մխեյանի (ծնված՝ 22.01.1955թ., անձնագիր՝ 3707242699, տրված 03.09.2008թ., ԴՄԾ 450-019-ի կողմից), Անդրանիկ Գարուշի Մխեյանի(ծնված՝21.10.1974թ., անձնագիր՝ 5208625024, տրված 22.08.2008թ., ԴՄԾ 550-019-ի կողմից), Գյուլվարդ Գարուշի Մխեյանի (ծնված՝25.05.1979թ., անձնագիր՝ 3208632105, տրված 25.02.2009թ., ԴՄԾ 420-046-ի կողմից), Էմմա Գարուշի Սոլկարյանի (ծնված՝ 13.06.1981թ., անձնագիր՝ 5004065847, տրված 28.07.2003թ., ԴՄԾ 542-038-ի կողմից), Երեմ Գարուշի Մխեյանի (ծնված՝27.09.1985թ., անձնագիր՝ 733463094, տրված 21.08.2014թ., ԴՄԾ 42001-ի կողմից), ընտանիքին հատկացվել է 0,19 հեկտար տնամերձ հողամաս, սակայն կադաստրային քարտեզագրման արդյունքում նրանց տնամերձ հողամասերի ընդհանուր չափերի փաստացի մակերեսը կազմում է 0,302 հեկտար (որից՝պետական գրանցում ստացած կադաստրային ծածկագիր՝ 05-033-141-012 0,147 հեկտար՝ վկայականի համար 900889 պետական գրանցման ամսաթիվ՝ 20.01.2003թ.: գրանցում չստացած՝ կադաստրային ծածկագիր՝05-033-135-003 0,1550 հեկտար), այսինքն՝0,112 հեկտարով (1120 քառակուսի մետրով) տնամերձ հողամասերի մակերեսը ավել է հանձնաժողովի կողմից հատկացված չափից: Պետական գրանցում չստացած 05-033-135-003 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասի չափը՝ 0,1550 հեկտար (1550 քառակուսի մետր), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, որը համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակության օգտագործման նպատակով, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, համայնքի ղեկավարի առաջարկությամբ օտարել փաստացի օգտագործողներին նրանց համաձայնությամբ՝ ուղղակի վաճառքի կարգով՝հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

2. 05-033-135-003 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասի վրա Գարուշ Մխեյանի ընտանիքի կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցած 304,55 քառակուսի մետր ներքին չափերով անհատական բնակելի տունը՝ երկհարկանի (կառուցված՝1989 թվականին), 70,38 քառակուսի մետր ներքին չափերով բնակելի տան 1-ին հարկի հարթակը (կառուցված՝1989 թվականին), 38,40 քառակուսի մետր ներքին չափերով բնակելի տան՝2-րդ հարկի փակ պատշգամբը (կառուցված՝ 1989 թվականին), 3,48 քառակուսի մետր ներքին չափերով բնակելի պարիսպի՝ (կառուցված՝ 1989 թվականին), տիրապետված և տիրապետվող հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում

սերվիտուտ, օրենքի ուժով ճանաչել Գարուշ Երեմի Մխեյանի (ծնված՝ 04.01.1949թ., անձնագիր՝ 3210966728, տրված 04.02.2011թ., ԴՄԾ 420-004-ի կողմից), Սոնիկ Կարապետի Մխեյանի (ծնված՝ 22.01.1955թ., անձնագիր՝ 3707242699, տրված 03.09.2008թ., ԴՄԾ 450-019-ի կողմից), Անդրանիկ Գարուշի Մխեյանի (ծնված՝ 21.10.1974թ., անձնագիր՝ 5208625024, տրված 22.08.2008թ., ԴՄԾ 550-019-ի կողմից), Գյուլվարդ Գարուշի Մխեյանի (ծնված՝ 25.05.1979թ., անձնագիր՝ 3208632105, տրված 25.02.2009թ., ԴՄԾ 420-046-ի կողմից), Էմմա Գարուշի Սոլկարյանի (ծնված՝ 13.06.1981թ., անձնագիր՝ 5004065847, տրված 28.07.2003թ., ԴՄԾ 542-038-ի կողմից), Երեմ Գարուշի Մխեյանի (ծնված՝ 27.09.1985թ., անձնագիր՝ 733463094, տրված 21.08.2014թ., ԴՄԾ 42001-ի կողմից), անշարժ գույքի հողօգտագործման և գույքային իրավունքները:

3. Գարուշ Մխեյանի ընտանիքի կողմից անհատական բնակելի երկհարկանի տունը, բնակելի տան 2-րդ հարկի փակ պատշգամբը կառուցվել է 1989 թվականին՝ բազալտ կոպտատաշ քարով, բնակելի պարիսպը կառուցվել է 1989 թվականին՝ տուֆ քարով:

4. Գարուշ Մխեյանի ընտանիքի կողմից սահմանված չափի հատկացումից ավել օգտագործվող հողամասի ուղղակի վաճառքի գումարը Երանոս համայնքի բյուջե կազմում է 114912 ((մեկ հարյուր տասնչորս հազար ինը հարյուր տասներկու) ՀՀ դրամ (1120 քմx342դրամ x30%=114912դրամ)), փաստացի օգտագործող Գարուշ Մխեյանի ընտանիքի կողմից հողամասի ուղղակի վաճառքի գինը համայնքի բյուջե վճարելու պահից նրանց ընտանիքի սեփականություն ճանաչել 05-033-135-003 կադաստրային ծածկագրով 0.1550 հեկտար ընդհանուր մակերեսով տնամերձ հողամասը:

5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:

6. 05-033-135-003 ծածկագրով տնամերձ հողամասի և անհատական բնակելի տան հաշվառման հասցեն է՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Երանոս, Վարդաձորի խճուղի, թիվ 35:

7. Առաջարկել ԱԳԿ Երևանի տարածքային ստորաբաժանմանը օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել անշարժ գույքի նկատմամբ Գարուշ Մխեյանի ընտանիքին պատկանող 05-033-135-003 ծածկագրով տնամերձ հողամասի առաջին պետական գրանցման աշխատանքները:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 20
գ.Երանոս